14.07.2015թ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղապետի 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

2015թ հուլիսի 14-ին, ժամը 12-00-ին տեղի ունեցավ Ակնաշենի գյուղապետի 2015 թվականի առաջին կիսամյակի հաշվետու նիստը:Նիստին մասնակցում էին ավագանու անդամները,համայնքի 68 (վաթսունութ) բնակիչներ և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ մարզպետի տեղակալ Դավիթ Սամսոնյանը:

Զեկուցող գյուղապետ՝ Միսակ Միսակյան.

2015 թվականի տարեկան բյուջեով նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտ՝**35421.9** հազար դրամ,այդ թվում՝

1. Հողի հարկից եկամուտ՝ **4501.8** (չորս միլիոն հինգ հարյուր մեկ հազար ու հարյուր) հազար դրամ.
2. Գույքահարկ՝**4468.0** (չորս միլիոն չորս հարյուր վաթսունութ) հազար դրամ.
3. Տեղական տուրքեր՝**195.0** (մեկ հարյուր իննիսունհինգ) հազար դրամ.
4. Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճար՝**620.8** (վեց հարյուր քսան հազար ութ հարյուր) հազար դրամ.
5. Ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքին հատկացվող դոտացիա՝ **25636.3** (քսանհինգ միլիոն վեց հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր) հազար դրամ.

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է **1443.43**(մեկմիլիոն չորս հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր երեսուն) հազար դրամ.

2015 թվականի առաջին կիսամյակի վարչական բյուջեի եկամուտների պլանը կազմել է **14543.2**(տասնչորս միլիոն հինգ հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր) հազար դրամ: Փաստացի եկամուտները կազմել են՝ **15638.1**(տասնհինգ միլիոն վեց հարյուր երեսունութ հազար մեկ հարյուր) հազար դրամ:

Ասաջին կիսամյակում եկամուտների պլանը կատարվել է **107,5 %** ով, այդ թվում համապատասխանաբար՝

ա/Հողի հարկի կիսամյակի պլանը կազմել է՝**350.0** հազար դրամ,փաստացի մուտքագրվել է՝ **453.7** հազար դրամ,

բ/Գույքահարկի պլանը՝2200.0 հազար դրամ , փաստացին՝1884.5 հազար դրամ,կամ՝85.6%.
գ/ Տեղական տուրքերի պլանը՝120,0 հազար դրամ, փաստացին՝ 100.0 հազար դրամ,կամ՝83.4%.
դ/.Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճարի պլանը 135.0 հազար դրամ, փաստացին՝ 111.7 հազար դրամ.կամ՝82.7%.
ե/ Դոտացիայի կիսամյակային հատկացումների պլանը կազմել է 12818.2 հազար դրամ ,հատկացվել է 100 %-ով:
2014 թվականի առաջին կիսամյակի վարչական բյուջեի եկամուտների պլանը կազմել է՝13956.8 հազար դրամ,փաստացի եկամուտները՝14756.0 հազար դրամ , կամ՝105,7% ,այդ թվում՝
ա/ Հողի հարկի կիսամյակի պլանը կազմել է՝450,0 հազար դրամ,փաստացի մուտքագրվել է՝1016.0 հազար դրամ.
բ/Գույքահարկի պլանը՝1650.0 հազար դրամ , փաստացին՝1797.7 հազար դրամ,կամ՝108.9%.
գ/ Տեղական տուրքերի պլանը՝120.0 հազար դրամ, փաստացին՝ 150.0 հազար դրամկամ՝125%.
դ/.Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճար պլանը՝210.0հազար դրամ. փաստացի՝մուտքագրվել է 264.4 հազար դրամ.
ե/ Դոտացիայի կիսամյակային հատկացումների պլանը կազմել է 11526.8 հազար դրամ ,հատկացվել է 100 %-ով:

2015 թվականի առաջին կիսամյակի սեփական եկամուտների պլանը 2014 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 705.0 հազար դրամով, փաստացի սեփ.եկամուտները նվազել է՝4102 հազար դրամով,այդ թվում՝

Հողի հարկի փաստացի եկամուտը 2015 թվականին 2014 թվականի համեմատությամբ նվազել է է 562.3 հազար դրամով,գույքահարկի գծով ավելացել է 86.8 հազար դրամով,վարձավճարը նվազել է 135.0 հազար դրամով, տեղական տուրքը նվազել է 50.0 հազար դրամով:

2015թվականի առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝
ա/ Աշխատավարձ՝ 7577.8 հազար դրամ.
բ/Էներգետիկ ծառայություններ՝ 737.1 հազար դրամ.
գ/Կապի ծառայություններ՝ 20.0.0 հազար դրամ.
դ/Տրանսպորտի վարձակալություն՝ 480.0 հազար դրամ.
ե/Ներքին գործուղումներ՝46.0 հազար դրամ.
զ/համակարգչային ծառայությունների համար՝113.2 հազար դրամ.
է/Տեղեկատվական ծառայություններ՝178.4 հազար դրամ.

ը/Ներկայացուցչական ծախսեր՝320.0 հազար դրամ. (դպրոցի շրջանավարտներին նվիրվել են նվերներ).
թ/Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝770.0.0 հազար դրամ.
ժ/Մասնագիտական ծառայություններ՝89.6 հազար դրամ.
ի/Գրասենյակային նյութեր՝40.0 հազար դրամ.
լ/Տրանսպորտային նյութեր՝150.0 հազար դրամ.
խ/Կենցաղային և հանր. Սենդի նյութերը՝624.0 հազար դրամ.
ծ/ Հատուկ նպատակային այլ նյութեր՝432.0 հազար դրամ.
կ/Ընթացիկ դրամաշնորհներ՝849.0 հազար դրամ.
հ/Գրքերի ձեռք բերման համար՝50.0 հազար դրամ.
ձ/Ջրի պոմպերի ձեռք բերում՝198.0.0 հազար դրամ.
ղ/ Նախագծահետազոտական ծախսեր՝40.0.0 հազար դրամ.
ճ/Կոմունալ ծախսեր՝500.0 հազար դրամ.
մ/Մասնագիտական ծառայությունների գծով՝30.0 հազար դրամ.
յ/Պարտադիր վճարներ՝108.0 հազար դրամ.
ն/Տնկիների ձեռք բերման համար՝132.0 հազար դրամ.
շ//Ջրամատակարարման ծախսեր՝440.3 հազար դրամ.
ո/Շենք և շինութ.կապ.նորոգում՝390.0 հազար դրամ.
չ/ Հուշարձանի վերան. համար՝300.0 հազար դրամ.
պ/Սոցիալական օգնություն՝990.0 հազար դրամ (Սոցիալապես անապահով բնակիչներին հատկացվել է սոց օգնություն):

2015 թվականի առաջին կիսամյակում ստացվել է 123/մեկ հարյուր քսաներեք/,ուղարկվել՝90 /իննիսուն/ փաստաթուղթ.
Հրավիրվել և անցկացվել է ավագանու 5 նիստ, ընդունվել է 21 որոշում , գյուղապետի՝34 որոշում արձակվել՝ 9 կարգադրություն:
Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 23 հրաման.
Քաղաքացիներին տրվել է 312 տեղեկանք:

Չնայած կատարված աշխատանքներին՝ համայնքում կան չլուծված խնդիրներ՝

1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում.
2. Խմելու ջրի ջրագծերի նորոգում.
3. Կարեն Դեմիրճյան փողոցի գազաֆիկացում:

Ակնաշենի գյուղապետ՝ /Մ.Միսակյան/

Աշխատակազմի քարտուղար՝ /Խ.Հովակիմյան/